

ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ



ՀՀ ՍՓՅՈՒՌԵԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Մփյիռքի ներկայացուցիչներ

ԱՐԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ, «ԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՄԷ

Մանրամասներ

ՀԱՅԻ ՌԳՈՒ ՅՍՂ@ՄԱՄԻՆ

Հայրենադարձներ

Հաղթանիքը տուն է, հոսկ արտերկիրը՝ հիւրանոց

Մփյիռքի ներկայացուցիչներ



ԱՐԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ, «ԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՄԱՍՆԻԿՆ ԵՄԷ

2011-04-18

Խնդրում եմ պատմեք Ձեր մասին, ընտանիքի, ծնողների, արմատների մասին

Ծնունդ եմ Երեւանում, 1984 թուականին աւարտել եմ Երեւանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, որից յետոյ երեք տարով մեկնել եմ Մոսկուա՝ ասպիրանտուրայում սովորելու, եւ 1988-ին ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայում պաշտպանել թեկնածուականը՝ «մաթեմատիկոսէ մասնագիտութեամբ: Այնուհետեւ վերադարձել եմ Երեւան եւ դասաւանդել Եպի-ի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում, մինչեւ 1992 թուականին ԱՄՆ մեկնելու:

Ծնողներս երեւանցի են, արմատներով՝ Մուշից, Դարսից, Երեւանից: Երեւանի պետական համալսարանի դասախօսներ են: Հայրս այսօր էլ դեռ դասաւանդում է:

Կնոջս՝ Անահիտի հետ սովորել ենք նոյն դպրոցում եւ 1979թ.-ին միասին աւարտել ենք :132 դպրոցի մաթեմատիկական թեքումով դասարանը: Անահիտը մասնագիտութեամբ ֆիզիկոս է: Աւարտել է Երեւանի պետական համալսարանի ռադիօֆիզիկայի ֆակուլտետը: Բայց այսօր աշխատում է որպէս ծրագրաւորող: Ունենք երկու երեխայ:

Որդիս՝ Վահէն ծնունդ է Երեւանում, 24 տարեկան է: Անցեալ մայիսին աւարտել է Սան Խոսէի համալսարանի բակալարատուրան եւ այս տարի ընդունուել է Նիւ Եորքի Գոլումբիայ համալսարանի ճարտարապետութեան ֆակուլտետի մագիստրատուրան:

Աղջիկս՝ Լիլիթը ծնունդ է Ամն-ում՝ Միլիկոնային հովտի քաղաքներից մեկում՝ Սանտա Կլարայում, 17 տարեկան է, սովորում է աւագ դպրոցի 11-րդ դասարանում: Պատրաստում է աւագ դպրոցի վերջին կիսամեակը ուսանել Երեւանի Վալդրֆեան դպրոցում: Լիլիթը նաեւ շատ տարուած է բալետով, որով լրջօրէն զբաղում է մասնակ հասակից: Երբ Լիլիթը Երեւանում է լինում, մասնակցում է պարարուեստի ուսումնարանի լաւագոյն ուսուցիչների դասերին:

Պարոն Մարկոսեան, ի՞նչ ճանապարհներ Ձեզ տարան Ամերիկա:

1992 թուականին մեկնեցի Ամերիկայի Միացեալ Նահանգներ՝ իմ մասնագիտութեամբ աշխատանք գտնելու նպատակով: Ես մաթեմատիկոս եմ, ծրագրաւորող: Այն ժամանակ Հայաստանում պահանջարկ չկար: Մի քանի դժուար ամիսներ անցկացրեցի Սան Ֆրանցիսկոյում, մինչեւ որ կարողացայ Միլիկոնային յովտում աշխատանքի ընդունուել "քումփաս դիզայն աուլթոմեյշն" ընկերութիւնում: Հաստատուեցի Կուպերտինոյ փոքրիկ քաղաքում, յետոյ Հայաստանից այնտեղ տեղափոխեցի ընտանիքս: Այդ տարիներին Միլիկոնային հովտի 90-ականների տնտեսական վերելքը դեռ չէր սկսուել, եւ գործ գտնելը բաւականին դժուար էր: Քանի որ Խորհրդային Միութիւնը դեռ նոր էր փլուզուել եւ սահմանները նոր բացուել էին, եւ փաստօրէն յայտնուեցի ամենաառաջին հայաստանցիների շարքում, որոնք նոյնպէս ճակատագրի բերումով իրենց տեղը գտան Ամն-ի բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերութիւններում:

Սա վճռական մի պահ էր իմ կեանքում, որը կանխորոշեց իմ յետագայ աշխատանքային գործունէութիւնը: Չեմ կարող ասել, թէ այս իմ ձգտումը դէպի միկրոչիփերի նախագծման բնագաւառը պատահական էր, քանի որ դեռ մանկութեանս տարիներից, նախ եւ առաջ յանձինս ծնողներիս, շրջապատուած եմ եղել այնպիսի մարդկանցով, որոնք զբաղուել են Խորհրդային Միութեան բարձր տեխնոլոգիաների զարգացումով, եւ մասնաւորապէս միկրոչիփերի նախագծման (պրոեկտաւորման) աւտոմատիզացիայով: Իմ առաջին ուսուցիչը եղել է հայրս, որը 70-ական թուականներին դեկավարում

էր «մերգելեանի Ինստիտուտի համապատասխան բաժինը եւ ճանաչուած մասնագէտ էր Խսիմ-ում:
Կը մանրամասնէ՞ք:

Սիրով: Ինչպէս արդէն նշեցի, իմ ամերիկեան աշխատանքային կարիերան սկսեցի 1992թ.-ին «քումփասէ ընկերութիւնում: Այնուհետեւ 1996թ.-ին ինձ հրաւիրեցին աշխատելու մի նորաստեղծ հիմնարկ՝ “արիստոյ թեքնոլոյզի”, որը զբաղուում էր էլեկտրոնային նախագծման ատոմատիզացիայի առաջադէմ մեթոդներով: Երեք տարի անց՝ 1999 թուականի ապրիլին Հայաստանում հիմնադրեցի ծրագրային “արսետ” ընկերութիւնը, որը մշակում էր սոֆթուերային համակարգեր «արիստոյ թեքնոլոյզի» համար: Ստեղծման պահին «արիստոն» ծրագրատրողների շատ փոքրիկ, վեց հոգանոց մի խումբ էր, որը ընդամենը չորս տարուայ ընթացքում դարձաւ վաթսուս աշխատող ունեցող, հզօր տեխնիկական կարողութիւններով մի հիմնարկ, եւ իր ներուժով գրաւեց «սինոփսիս» ընկերութեան ուշադրութիւնը: Արդիւնքում, 2003 թուականին «արսետը» դարձաւ առաջին ընկերութիւնը, որը «սինոփսիսը» գնեց Հայաստանում եւ դրանով հիմք դրեց իր ամենամեծ արտասահմանեան ներկայացուցչութեանը, որը այսօր Հայաստանի մեծագոյն սոֆթուեր ընկերութիւնն է՝ աւելի քան 500 ինժեներ աշխատուով: Կ'ուզէի նաեւ նշել, որ «արսետը» առաջին երկու ընկերութիւններից մէկն է, որը յայտնուեց «վիսաֆեր տեխնոպարկում»...

Ոգեւորուած «արսետի» յաջողութիւնով, 2003թ.-ին ես համակուրսեցի ընկերներիս՝ Սուրեն Ալեքսանեանի եւ Սեդրակ Սարգիսեանի հետ, (ասեմ, որ Սուրենը եւ Սեդրակը այժմ բնակուում են Սիլիկոնային յովտում), հիմնեցինք մի նոր ընկերութիւն՝ “պոնտէ սոլուշն”, որը նոյնպէս նոր, բարձրտեխնոլոգիական ծրագրերի համակարգ էր մշակում: Բիզնեսի բնոյթով պայմանաւորուած, «պոնտէ» գլխաւոր գրասենեակը գտնուում էր Սիլիկոնային յովտում, բայց ընկերութեան սոֆթուերային համակարգի մշակումը ամբողջութեամբ կատարուում էր Երեւանում: 2008թ.-ին, «մենթոր գրաֆիքս» ընկերութիւնը, որը «սինոփսիս»-ի համար երկրորդ ամենամեծ մրցակիցն է, գնեց «պոնտէ»-ն եւ իր օֆիսը հաստատեց Երեւանում: Այսօր «մենթոր գրաֆիքս»-ի հայաստանեան մասնաճիւղն ունի աւելի քան վաթսուս աշխատող եւ արագ տեմպերով ընդլայնուում է: Պլանաւորում ենք մինչեւ եկող տարուայ վերջ ունենալ 150 կամ աւելի աշխատող: Ես մինչեւ այժմ աշխատում եմ «մենթոր գրաֆիքս»-ում:

Ամփոփելով մասնագիտական թեման, կ'ուզէի ասել, որ շատ հպարտ եմ, որ վերջին տասներկու տարիների՝ իմ եւ ընկերներիս աշխատանքի արդիւնքում, էլեկտրոնային պրոէկտատրման ատոմատացման՝ աշխարհի երկու ամենամեծ առաջատար ընկերութիւններ՝ «սինոփսիս» եւ «մենտոր գրաֆիքս» մուտք գործեցին Հայաստան եւ շարունակում են լուրջ ներդրումներ կատարել հայաստանեան բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

Պարոն Մարկոսեան, ասացիք, որ յաճախ էք լինում Հայաստանում: Ինչ փոփոխութիւններ էք նկատում, դրական են, թե՞... Քանի որ յաճախ եմ գալիս, դժուար եմ նկատում փոփոխութիւնները: Բայց, անշուշտ, դրական տեղաշարժ կայ: Ասեմք, թէկուզ, երկիր մուտք գործելն արտասահմանցիների համար աւելի դուրին է դարձել: Գործի հետ կապուած, որպէս օրինակ, կարող եմ ասել, որ մաքսային ծառայութիւնները աւելի հեշտացրել եւ թափանցիկ են դարձրել իրենց գործընթացը: Եւս մէկ բան կ'ուզէի նշել, որը անկասկած աչքի է ընկնում՝ վերջին տարուայ ընթացքում վարորդները դարձել են աւելի կարգապահ, եւ դա շատ գովելի է: Ասածս այն չէ, թէ բոլորը հիմա օրէնքի համաձայն են երթեւեկում, բայց դրական միտումը նկատելի է, եւ դա պէտք է խրախուսել...

Ինչ ինքնազգացողութիւն ունէիք, երբ առաջին անգամ յայտնուեցիք Ամն-ում:

Զգացողութիւններս միանշանակ չեն: Ամենակզբում դժուար էր, ի հարկէ: Ունէի որոշ դժուարութիւն հաղորդակցուելու առումով, քանի որ անգլերէնս զարգացած չէր: Բայց արագ ինտեգրուեցի եւ ինձ շատ լաւ եմ զգում: Ասեմ, որ Սան Ֆրանցիսկոյի ծովածոցի շրջանը, որտեղ գտնուում է Սիլիկոնային հովիտը, շատ իւրայատուկ տեղ է: Իր բնակչութեան բազմազանութեամբ եւ միմեանց նկատմամբ հանդուրժողականութեամբ, այն առանձնայատուկ է նոյնիսկ ամերիկեան չափանիշներով:

Եթէ թոյլ կը տաք, մի դրուագ պատմեմ այս կապակցութեամբ: Երբ դեռ Հայաստանում էի ապրում, հեռուստացոյցով վաւերագրական ֆիլմերի մի շարք դիտեցի Ամն-ի տարբեր նահանգների մասին, նկարահանուած հէնց ամերիկացիների կողմից: Երբ խօսքը գնաց հիւսիսային Կ'ալիֆոռնիայի մասին, որի բնակչութեան մեծամասնութիւնը ապրում է Սան Ֆրանցիսկոյի շրջանում, հեղինակը յայտարարեց, որ այստեղ ապրում են մարդիկ, որոնք բոլորովին տարբեր են իրարից եւ աշխարհի բոլոր միւս մարդկանցից: Շարունակելով միտքը նա ասաց, որ այստեղի ամբողջ բնակչութիւնը կազմուած է «սպիտակ ազգաններից» (բնականաբար, բառիս լաւ իմաստով): Միայն երբ յայտնուեցի Սան Ֆրանցիսկոյում, հասկացայ այդ խօսքերի իսկական իմաստը: Եւ պէտք է խոստովանեմ, որ ես ինձ շատ լաւ եմ զգում «սպիտակ ազգանների» շրջապատում, եւ մի գուցէ ինքս էլ դարձել եմ այդպիսինը:

Ինչ կ'ասէք Սան Ֆրանցիսկոյի հայկական համայնքի մասին:

Սան Ֆրանցիսկոյի համայնքը շատ փոքր է Լոս Անջելէսի կամ Բոստոնի համայնքների հետ համեմատած: Սակայն, ինչպէս եւ վերը նշուած մեծ համայնքները, մեր շրջանի հայկական համայնքը միատարր չէ: Կան հնաբնակներ, որոնք այստեղ վաղուց են հաստատուել: Օտո երեսուն-քառասուն տարի առաջ մեծ հոսք եկաւ Լիբանանից, Սիրիայից, միւս արաբական երկրներից, ինչպէս նաեւ Իրանից: Վերջին 10-20 տարիների ընթացքում շատ են եկել Հայաստանից, Բարուից եւ նախկին Խսիմ-ի այլ վայրերից: Սոյն փաստը բացատրում է, թէ ինչու Սան Ֆրանցիսկոյի, ինչպէս նաեւ Ամն-ի միւս հայկական համայնքները միաձոյլ չեն: Անշուշտ, հիմնականում բոլոր «ենթա-համայնքները», բարեկամական վերաբերմունք ունեն

իրար նկատմամբ, բայց միս կողմից, իրենք միանշանակ միաձույլ չեն: Դրա համար կան տարբեր օբյեկտիւ եւ սուբյեկտիւ պատճառներ, որոնց քննարկումը մի առանձին գրոյցի թեմա կարող է լինել:
Դուք ո՞ր խմբին էք դասում Ձեզ:

Եթէ մաթեմատիկորէն խիստ արտայայտուենք, դա կը հնչի այսպէս՝ ըստ սահմանման եւ «հայաստանցի» էմ: Բայց շատ կաշկանդուած ու տհաճ էմ զգում, երբ ինձ կամ մէկ ուրիշին սահմանում եւ սահմանափակում են նման պիտակով: Ես մասնակցում եմ եւ ունեմ մտերիմ ընկերներ բոլոր հայկական «էնթա-համայնքներում»: Նաեւ փորձում եմ հնարաւորինս աջակցել տարբեր համայնքների միասնականացման շարժմանը:

Իսկ ի՞նչ էք կարծում, ինչը՞ կարող է համախմբել համայնքի բոլոր անդամներին, նպաստել ազգային գաղափարի վերածնունդը:

Համայնքի առաջադէմ մարդիկ փորձում են աւելի մօտեցնել ներհամայնքային տարբեր շերտերը: Քանի որ Սան Ֆրանցիսկոյի հայկական համայնքը շատ փոքր է, այս շրջանում ընդամենը մէկ միջնակարգ հայկական դպրոց կայ: Դպրոցն իբրեւ կրթական եւ մշակութային կենտրոն, վստահօրէն կարող է համախմբել հայերին, եթէ խիզախ լինի ու ստանձնի այդ կարելու եւ դժուար դերը:

Կարելի է բոլորին համախմբել համահայկական գաղափարի շուրջ: Այ օրինակ, այս տարի յունուարին մեր համայնքի հիւրն էր Յուստանայ Պասկալեան: Նրա՝ Արցախեան պատերազմին նուիրուած ֆիլմերի ցուցադրութեանը միահամուռ կերպով մասնակցեցին համայնքի շատ տարբեր կազմակերպութիւններ: Ստեղծուել էր շատ ջերմ ու միասնական մթնոլորտ: Ես հաւատում եմ, որ քայլ առ քայլ, բոլորին յուզող հիմնահարցերի շուրջ հնարաւոր է համախմբուել, միասնական դառնալ: Բայց կան շատ ուրիշ, ոչ կենսական խնդրներ, որոնք աւելի ճիշտ ձեւով կլուծուեն, եթէ լինի բազմակարծութիւն եւ բաց քննարկում:

Իմ կարծիքով, սա միայն Սփիւռքի խնդիր չէ: Հայաստանում եւս շատ կարելու պրոցեսներ են տեղի ունենում, միտում կայ, որ սփիւռքահայերը գալիս են ու հիմնաւորում են Հայաստանում՝ հայ հասարակութեան մէջ ստեղծելով նոր դինամիկա...

Այդուհանդերձ, արտագաղթը շարունակում է...

Իմ կարծիքով, արտագաղթը միայն բացասական երեւոյթ չի: Դրական կողմ էլ ունի: Հայաստանցիները գնում են, աշխարհ են տեսնում, ընդօրինակում են այլ ժողովուրդների, մշակոյթների դրական կողմերը ու բերում են այդ փորձը ետ՝ Հայաստան: Հազուադէպ է լինում, որ կապը լիովին կտրուում է: Առաւել եւս, կան որոշ բացառիկ դէպքեր, երբ արտագաղթած մեր հայրենակիցը ընդմիջու վերադառնում է Հայաստան:

Այո, հազուադէպ երեւոյթ է, բայց կան վառ օրինակներ: Իմ նախկին կոլեգաներից մէկը, “արսետի” առաջին աշխատակիցներից՝ Վահագն Պօղոսեանը, 2000թ. մինչեւ 2003թ. ապրելով Սիլիկոնային յովտում եւ աշխատելով առաջադէմ հիմնարկներում, վերադարձաւ Հայաստան եւ 2003թ. այստեղ հիմնեց “ինստիգէյթ” ընկերութիւնը, որտեղ այսօր աշխատում է 120 մասնագէտ: “ինստիգէյթը” համագործակցում է համաշխարհային տարբեր առաջատար ընկերութիւնների հետ: Բացի այդ, Վահագնը մշակել է թրեյնինգային ծրագրեր եւ կազմակերպել է ծրագրաւորման ուսումնական կենտրոններ Երեւանում, Գիւմրիում, Վանաձորում եւ շուտով նաեւ՝ Ստեփանակերտում:
Եթէ արտագաղթողների 100-ից, նոյնիսկ 1000-ից մէկը գա ու օգտակար լինի Հայաստանին, զարգացնի որեւէ բնագաւառ, ինչպէս Վահագն Պօղոսեանը առաջ է տանում բարձր տեխնոլոգիաների ոլորտը, իմ կարծիքով, այս պարագայում Հայաստանը աւելի կը շահի, քան եթէ արտագաղթ ընդհանրապէս չլինէր եւ հայաստանցիների համար այսպիսի հնարաւորութիւններ չստեղծուէին:

Այս արտառոց դէպքերի քանակը կարող է տասնապատկուել եւ նոյնիսկ դառնալ մասսայական երեւոյթ, եթէ Հայաստանի կառավարութիւնը մշակի եւ իրագործի պետական ծրագիր, որը արտագաղթած, եւ աւանդական սփիւռքի տաղանդաւոր հայութեանը կը խրախուսի գալ Հայաստան եւ իր արժէքաւոր փորձը ներդնել հայ հասարակութիւն զարգացման մէջ: Ես պատկերացնում եմ, որ նման ծրագրի նպատակը պէտք է լինի հայրենադարձների համար այնպիսի պայմաններ ստեղծել, որ իրենց համար դա լինի ոչ թէ «գոհաբերութիւն յանուն հայրենիքի», այլ ցանկալի եւ բարենպաստ կեանքի եւ կարիերայի զարգացում: Մրա համար նոր անիւ յորինել պէտք չի՝ նման օրինակներ աշխարհում կան եւ եզակի չեն:
Կարծում եմ, որ Սփիւռքի նախարարութեան գլխաւոր խնդիրներից մէկը պէտք է լինի նման համաշխարհային փորձի ուսումնասիրութիւնը, այդպիսի գործնական ծրագրի մշակումը Հայաստանի համար եւ ի հարկէ, այս գործընթացում առաջատարի դերը ստանձնելը:

Եւ վերջում, ի՞նչ կը մտադրէի Հայաստանին, ուրեմն նաեւ ինձ, որովհետեւ ես Հայաստանի մի մասնիկն եմ: Ի հարկէ միայն բարգաւաճում, բարօրութիւն եւ խաղաղութիւն:

Մանրամասներ



ՀԱՅԻ ՈԳՈՒ ՅԱՂԹԱՍԻՒՆ

2011-04-21

Աւելին, այն կառուցուելու է ոչ միայն Հայաստանի եւ աշխարհասփիտ հայութեան միջոցներով, այլեւ Հայաստանի, Արցախի եւ աշխարհի տարբեր անկիւններից ուղարկուած ԳԲՄՆԲՏՈՎ: Քարից սերուած, քարաշատ երկրում ապրած ազգ, ով դաստիարակուել է քարից, քար՝ դարձած սրբազան խաչքար ու հազարամեայ վանք: Հայաստան ուղարկելով հեռաւոր երկրի՝ իրենց երկրորդ հայրենիքի գրանիտը, դրան հաղորդելով իրենց հոգու եւ սրտի ջերմութիւնը, մտքերն ու յոյզերը, հայր մէկընդմիջտ կը հաստատուի՝ Հայաստանի սրտում՝ մի քանի

սերունդ առաջ անցնելով, մշտական գրանցում ստանալով նախնիների Հայրենիքում՝ նրան միանալով նոր, անտեսանելի լարերով:

Յատկապէս այս գաղափարն էլ կը գրաւի բոլորին, եւ իւրաքանչիւր հայի մասնակցութիւն՝ թէկուզ խորհրդանշական, կը դառնայ ներկայութեան՝ հայրենիքի սրտում գործելու հնարաւորութիւն: Յատկապէս Հայաստանի սրտում՝ ներկայութեան, ներկայ լինելու գաղափարը պէտք է ընկնի Հանրապետութեան Գլխաւոր հրապարակում կառուցուող կոթողի հիմքում, որը պէտք է եւ կարող է դառնալ ազգի միասնութեան սկիզբը, հիմքը...

Դարեր շարունակ հայը երագում է ՄԻԱԻՈՐՈՒԵԼ... Մեզ փորձեց միացնել Տիգրան Մեծը (տարածքով), Գրիգոր Լուսաւորիչը (կրօնով՝ քրիստոնէութեամբ), Մաշտոցը (այրուբենով), Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը (միասնական եւ անբաժանելի Հայաստանով)... Մակայն ճակատագիրն ու պատմութիւնը մեզ անելի ու անելի ցրեցին աշխարհով մէկ: Այնպէս որ, կենտրոնախոյս ուժի յաղթահարման անհրաժեշտութիւնը, միասնութիւնը՝ այսօր, այս ազգեպիւ ու անընդհատ փոփոխուող աշխարհում, անելի քան երբեւէ արդիական է եւ անհրաժեշտ, քանի որ միասնութեան գաղափարը այսօր էլ բոլոր հայերի համար ունի ոգեշնչող, ոգեւորող եւ յաղթական նշանակութիւն:

Իսկ ի՞նչ ճիշտ կը լինէր առաջարկել կառուցել Հանրապետութեան հրապարակում, որպէսզի այն հասկանալի, ընկալելի եւ ընդունելի լինէր աշխարհասփիտ հայութեան համար եւ որեւէ մէկի կողմից չլինէր հերքելի: Միանշանակ է՝ մեր անկախ երրորդ հանրապետութեան, Արցախեան յաղթանակի, հայ ոգու տոկոսնութեան, կորովի ու յաղթանակի խորհրդանիշը՝ ՅԱՂԹԱՍԻՒՆԸ, որպէս նշան մեր յաղթանակած ժողովրդի:

Յաղթանեան համագային շինարարութիւնը եւ հէնց յաղթասիւնը՝ միանշանակ ձեռք կը բերի այնպիսի իմաստ, որն անհնար է գերազանահատել: Նախեւառաջ կը միաւորուեն բոլորը՝ մինչեւ վերջին մարդը, քանի որ կը կառուցեն ոչ թէ որեւէ անհատի յուշարձան, որին ոչ բոլորն են ընդունում, ոչ թէ եկեղեցի, որը, ցաւօք, միացնում է ամենեւին էլ ոչ բոլոր հայերին, ոչ թէ մարգարահ կամ մշակութային պալատ, որի շահագործումից կարող է շահ ստանալ ինչ-որ մէկը, այլ իսկապէս միաւորող խորհրդանիշ, որից չի կարող որեւէ մէկը շահոյթ ակնկալել կամ օգտագործել շահադիտական նպատակներով. այն կը պատկանի բոլոր հայերին եւ ողջ աշխարհին, ինչպէս Էյֆելեան աշտարակը:

Այսպիսով, յաղթասիւնը կոչուած է եւ անպայման կը դառնայ այն առանցքը, որը կը միաւորի մեր ժողովրդին, կը դառնայ ձգտականութեան կենտրոն, ազգի ողջպատյոյտի առանցքը եւ նոր ժամանակի հաշուարկային կէտը: Այս գաղափարում գլխաւորը ոչ այնքան սեան կառուցումն է՝ որպէս այդպիսին, որքան բարոյապարտական այն ազդեցութիւնը, որ այն կ'ունենայ մեր ժողովրդի գիտակցութեան վրայ: Ի դէմս այս համագային կառոյցի՝ ազգը վերջապէս ձեռք կը բերի ձեռակերտ մի յուշարձան, որը մէկտեղ կը ժողովի Հայկի բոլոր սերունդներին: Անհատականութիւնների ազգ, ով որպէս առաջնորդ երբեւէ մէկին չի ընդունել, այսպիսով ձեռք կը բերի մի կառոյց-գաղափար-առաջնորդ՝ ի դէմս ՅԱՂԹԱՍԵԱՆ, որի վրայ, հիմքից մինչեւ գագաթ, պարտութեան հարթականդակով կը կերտուի մեր ինքնութեան նկարագիրը, մեր պատմութիւնը՝ նախահայր Նոյից մինչ մեր ժամանակակիցը: Մեան վերելի մասում կը տեղադրուի թեւատարած արծիւը, իսկ նրա ճիրաններում՝ մի շրջանակ՝ Արարատի եւ Լեռան վրայ՝ Նոյեան տապանի պատկերով:

Ինչու՞ յատկապէս սիւնը պէտք է դառնա համայն հայութեան միասնութեան խորհրդանիշ: Դեռեւս հնուց՝ մարդու առաջնային պաշտպանական միջոցներից էր ձողը: Դրան էին հենուում մեր նախնիները ճանապարհ գնալիս, ձողով էին պաշտպանում զազաններից ու թշնամիներից: Սրածայր օբսիդիանի գլխիկով (անելի ուշ՝ բրոնզէ եւ ապա՝ երկաթէ) ձողը դարձաւ նիզակ՝ մահաբեր զենք, իսկ երբ դրա վրայ զինուորը կապում էր թշնամու արնաշաղախ հագուստից մի պատառիկ (դրօշի նախատիպը), մարտիկն արդէն իսկ շրջակայ միջավայրին ազդարարում էր իր յաղթանակը: Ձողերի վրայ էր հաւաքում ծածկը, ինչը փրկում էր մարդուն արեւի կիզիչ ճառագայթներից, յորդառատ անձրեւից ու կարկուտից, իսկ երբ ձողերը շրջանակում էին քարերով կամ կաւով, առաջանում էր օջախ: Յետագայում երկնքի եւ աստուածների բարկութիւնից խուսափելու նպատակով ձողով (սիւնով) սկսեցին պահել երկինքը, որպէսզի այն չթափուի մահկանացուների գլխներին: Եւ որքան հզոր ու ուժեղ էր ցեղը (ժողովուրդը), այնքան բարձր ու հանդիսաւոր էր սիւնը: Բացի օգտապաշտական (ուտիլիտար) նշանակութիւնից (յենարան, դիմհար), հնում՝ սիւնը խորհրդանշում էր նաեւ առնականութիւն, բերրիութիւն, ցեղի շարունակելիութիւն եւ, վերջապէս, յաղթանակ: Այս բազմիմաստ խորհրդանիշը գտնուածներից ամենահինն է եւ ունի շուրջ 40 հազար տարուայ պատմութիւն: Որոշ ցեղերի եւ ժողովուրդների կողմից այն կիրառում էր՝ որպէս մեծարանքի միջոց՝ յիշարժան իրադարձութիւնների, նշանակալի յաղթանակների, յաղթարշաւների եւ մեծանուն մարդկանց պատուին:

Այսպիսով, սիւնը՝ որպէս ուժի, յաղթանակի, յոյսի եւ ոգու խորհրդանիշ, չի կորցրել եւ դժուար թէ երբեւէ կորցնի իր նշանակութիւնը, քանի կայ մարդկութիւնը: Սրա ապացոյցներից է նաեւ վերջերս կառուցուած աշխարհի

ամենաբարձրայարկ շենք-հիւրանոցը Դուբայում, որն իր ձևով սին է յիշեցնում: Մինը երբեւէ չի կորցնի իր նշանակությունն առաջին հերթին բարոյահոգեբանական տեսանկյունից: Հնում, սկսած Շումերներից, Բաբելոնից եւ Եգիպտական թագաւորութիւնից, սին կանգնեցնելու իրաւունք էին ստանում միայն յաղթանակած թագաւորներն ու կայսերը: Միայն կայացած պետութիւնները, կրթուած եւ ուժեղ ժողովուրդներն էին խոյացնում սիններ՝ յայտնելով աշխարհին իրենց երկրի հզօրութեան, անպարտելիութեան եւ առաջ գնալու նպատակամղումներին: Օրինակ, Շահրիբազարում Թամերլանի Ակ-սառայ՝ պալատի դռան արուած գրութիւնը վկայում է, Եթէ դուք կասկածում էք մեր հզօրութեանը, նայէք մեր կառոյցներին: Տպաւորիչ ճարտարապետութիւնը, դէպի երկինք ձգուող սինները, դիմաքանդակները, ծայրածայրն ու մինարետները ցուցադրում են ժողովրդի եւ կայսրութեան ոգու հզօրութիւնը: Եւ վաղուց արդէն աւանդոյթ դարձած այս սկզբունքը պահպանում է մինչ օրս:

Հրապարակում վեր խոյացող սեան հոգեբանական ազդեցութիւնը մարդկանց վրայ անհերքելի է: Առաջին հարցը, որ առաջանում է, այն է, թէ ու՞մ կամ ինչի՞ պատուին է կերտուած սինը: Ապա, մարդիկ սկսում են ուսումնասիրել շինութեան կառուցուածքը՝ գաղափարն ու իրականացումը համադրելով սինը կառուցած ժողովրդի մասին ունեցած պատկերացումներին, կատարելով համապատասխան եզրահանգումներ: Եւ որքան գեղեցիկ, հանդիսաւոր եւ գաղափարական հենքով է կառուցուած սինը, այնքան անելի մեծ է հիացմունքը, յարգանքը եւ հետաքրքրութիւնը այն կերտողների նկատմամբ:

ՅԱՂԹԱՍԵԱՆ խոյացմամբ-կառուցմամբ միանգամից կլուծուէն մի շարք կարեւորագոյն խնդիրներ: Գլխաւորի մասին արդէն ասուել է՝ համազգային կառոյցը կը համախմբի աշխարհի հայութեանը սեան կառուցման ողջ ընթացքում: Սակայն առաւել կարեւորն այլ խնդիր է. ինչպէ՞ս անել, որպէսզի աշխարհում ամենագեղեցիկ հրապարակներից մէկի՝ հանճարեղ Թամանեանի գեղեցկագոյն կառոյցի դիմագիծը չարաւաղուի, այլ անելի հարստացուի՝ հաղորդելով նրան բոլորովին նոր իմաստաւորում ու նշանակութիւն: Հարիւրաւոր նախագծերը եւ ֆոտոկլաժները համոզեցին՝ Հանրապետութեան հրապարակը՝ կենտրոնում ՅԱՂԹԱՍԻՆԸ (տես՝ լուսանկարը) ձեռք կը բերի լիովին այլ, նոր նշանակութիւն, կը ստանայ նոր հնչեղութիւն, սրբութիւն եւ, ինչու չէ, առեղծուածային նշանակութիւն: Հրապարակի ձուածէ տարածքը՝ կենտրոնում սին-միջուկով, արդէն իսկ հոգեբանօրէն այլ կերպ կ'ընկալուի, ինչպէս հայկական տիեզերքի՝ կենտրոն, որի շուրջ պտտուում է հայկական աշխարհը, ինչպէս յենակէտ եւ ամուր հենք՝ հայոց աշխարհի: Առաջ անցնելով մաքուր մշակոյթի քննադատների ընդվզումներից՝ բերեմ դարձեալ Էյֆելեան աշտարակի օրինակը, որին դէմ էին այն ժամանակուայ Ֆրանսիայի ամենահզօր ուղեղները այն պատճառաբանութեամբ, որ աշտարակը կ'այլանդակի տօն-քաղաքի դիմագիծը: Այնինչ պատահեց հակառակը, աշտարակը դարձաւ Փարիզի վնջժօրէն պահպանուող ու փայտաշէն խորհրդանիշը, եւ արդէն երբեք չի դադարի այդպիսին լինելուց: Միանգամայն վստահ եմ, որ այդպէս կը լինի եւ ՅԱՂԹԱՍԵԱՆ դէպքում: Յաղթանեան հիմքում պէտք է դրուի Հայաստանի գրանիտը, ապա Արեւմտեան Հայաստանի (Թուրքիայ), Արցախի, Ջավախքի, Իրանի, Ռուսաստանի եւ այսպէս շարունակ, յատկապէս նման յաջորդականութեամբ, եւ կարծում եմ՝ այս տրամաբանութիւնը բացատրութեան կարիք չունի:

1991 թուականին Հայաստանի անկախացումն ու Արցախի ազատագրական պայքարում տարած յաղթանակն անուրանելի են, եւ հանդիսանում են հայ ոգու, կայունութեան, անձնագոհութեան, ազատութեան տեսչանքի եւ արդարութեան արգասիքը: Մեր ժողովրդի պատմութեան համատեքստում դրանք անտարբեր չթողեցին հայկական Սփիւռքի եւ ոչ մի համայնքի, ոչ մի հայի: Ուստի վաղուց հասունացել է այս մեծագոյն իրադարձութեան՝ Արցախի յաղթանակի պատուին, Յաղթանակն կառուցելու անհրաժեշտութիւնը: Կրկնում եմ, սակայն այս շինութիւնը պէտք է կառուցուի ազգովին, աշխարհի բոլոր հայերի կողմից: Սա կը դառնայ պատուի եւ իւրաքանչիւր համայնքի արժանապատուութեան խնդիրը: Աւելին, եթէ կառուցուի 2 յաղթանակ՝ մէկը մեծ՝ Երեւանում, եւ անելի փոքրը՝ Ստեփանակերտում, ապա այս գաղափարն անելի ծանրակշիռ կը դառնայ, անելի իմաստալի ու խորը կը լինի: Յաղթանեան կողքին անպայման պէտք է կառուցուի նաեւ գլխաւոր մուտք՝ պորտալ, հենց նոյն գրանիտից, որոնց վրայ գրառուած կը լինեն, թէ որ երկրից եւ որ համայնքից է ուղարկուած այս կամ այն գրանիտը, եւ տեղեկատուութիւն կտրուի տուեալ համայնքի մասին: Միտումնաւոր չենք անդրադառնում կառոյցի տեխնիկական տուեալներին եւ չափերին, թէեւ ենթադրում է, որ իր գաղափարին ու նպատակին համապատասխանելու տեսանկյունից սինը մէկ երրորդով պէտք է գերազանցի հրապարակը երիզող շինութիւնները: Չենք անդրադառնում, քանի որ հարցը խիստ մասնագիտական է: Սեան բարձրութիւնը, չափերը եւ միւս չափորոշիչները կ'որոշեն նեղ մասնագետները՝ կոնստրուկտորները, ինժեներները, դիզայներները, ճարտարապետները: Որպէս կարեւորագոյն՝ տրանսպորտային երթելի խնդիր լուծում՝ կառոյցի համար առաջարկում ենք եւս մի կարեւորագոյն կ'նկնեցնայի, տեսակէտ՝ այն կառուցել զորոյ յարկից՝ այսինքն՝ կառոյցը կը բարձրանայ գետնի տակից՝ իսկ հենց հրապարակը տրամադրուի միայն տրանսպորտին, իսկ հետիոտնը կ'օգտուի միայն գետնուղուց, ուր տեղակայուած կը լինեն յուշանուէրների եւ այլ խանութներ: Մինը կը խոյանայ ներքեւից /գետնի տակից/ առաստաղի՝ ձեռքով ու ներքեւից վերեւ կը ճառագայթեն լուսարձակների լոյսերը՝ ստեղծելով տպաւորութիւն, թէ սինը ձգուած է դէպի աներջութիւն /երկինք/՝ դառնալով այն միջուկը, որը միացնում, կապում է երկիրն ու երկնակամարը:

Սակայն եւ այս նախագիծը, եւ գաղափարը անաւարտ կամ թերի կը մնան առանց մի կարեւորագոյն տարրի: Վաղուց արդէն հասունացել է Սփիւռքի՝ աշխարհասփիւռ հայութեան թանգարան ունենալու պահը: Եւ անելի լաւ տեղ, քան Հայաստանի ազգային պատմութեան թանգարանն է, չկայ, որի ութանկյունն ինքն է պահանջում 4-5 հարկերի ապակե գմբէթ (թանկարժէք մի քար՝ հրապարակի օղակում)՝ իր դահլիճներով՝ իւրաքանչիւր համայնքին տրուած յատուկ նշանակութեամբ: Բնականաբար, ցուցանմուշների քանակն անմիջապէս կը սկսի աճել, եւ դրանց համար անհրաժեշտ կը լինի լրացուցիչ տարածք, բայց կարեւորը սա չէ, յետագայում կարելի է մէկ ուրիշ վայրում կառուցել ժամանակակից պայուստարան եւ ցուցադրահներ, իսկ գմբէթը կը դառնայ կենտրոնական ցուցադրահրապարակը եւ ողջ հայութեան նիւթական ու ոգեղէն միասնութեան խորհրդանիշը (տես՝ նկարը):

Թեոս ՆԵՐՍԻՍԵԱՆ

Հայրենադարձներ



Հայրենիքը տուն է, իսկ արտերկիրը՝ հիւրանոց

2011-04-18

Պարոն Բաղդատեան, ե՞րբ էք հայրենադարձուել:

-2005 թուականին եկայ Հայաստան: Հայրենիքիս նկատմամբ ունեցած զգացումներս, հայկական դաստիարակութիւնս ինձ միշտ մտորել են տունել Հայաստանի մասին, եւ երազել եմ իմ բոյնը հիւսել Հայրենիքում: Հայրենադարձուել եմ եղբօրս՝ Պիերի եւ մայրիկիս՝ Անիի հետ. Հայրս մահացաւ 1993 թուականին: Հայրենիքը տուն է, իսկ արտերկիրը՝ հիւրանոց, ժամանակաւոր կ'ացարան, որը մի օր պիտի թողնես: Ճիշտ է, ծնունդ, մեծացել ենք Լիբանանում, սովորել ենք արտասահմանում, սակայն հայրենիք սէրը հօգօր է ամէն ինչից, մենք գիտէինք, որ մի օր պիտի գանք Հայաստան: 10 հոգով վերադարձանք, 10 հայ էլ աւելացաւ Հայաստանում:

սովորել ենք արտասահմանում, սակայն հայրենիք սէրը հօգօր է ամէն ինչից, մենք գիտէինք, որ մի օր պիտի գանք Հայաստան: 10 հոգով վերադարձանք, 10 հայ էլ աւելացաւ Հայաստանում:

-Առաջին անգամ ե՞րբ էք եղել Հայաստանում եւ ի՞նչ տպաւորութիւններով էք մեկնել:

-Առաջին անգամ եկել է եղբայրս, 1993-ին եկել եմ ես: Եկանք, երբ Հայրենիքը մէջքը չէր շտկել երկրաշարժի ծանրութիւնից, Երբ Արցախեան գոյամարտը չէր հանգուցալուծուել, երբ քաղաքում, երկրում մուշ էր, ցուրտ եւ տխուր եւ մենք հասկացայ նք, որ սա է մեր երկիրը եւ մեր երկիրը մենք պիտի կառուցենք:

Սկզբում փաթեթաւորման գործ ձեռնարկեցինք, որն այնքան էլ արձագանք չգտաւ Հայաստանում: Յետագայում ձեռնարկեցինք շոկոլադի գործը, հիմնեցինք շոկոլադի գործարան Աշտարակում: Անցեալ տարի բացել ենք շոկոլադի խանութ-սրահ Տէրեան փողոցում: Խանութը կոչուում է «գուրմե-դուրմէ: Գուրմէ նշանակում է ախորժաբոյր, իսկ դուրմէն հայերէն բառ է եւ նշանակում է շոկոլադ:

-Երբեւէ չէ՞ք զոջացել վերադարձի համար:

-Ցանկացած երկրում, քաղաքում, ընտանիքում առաջանում են խնդիրներ, հիասթափութիւններ, ինչու չէ...երբեմն զոջում ես զայրացած պահերիդ, բայց երբ խաղաղում ես, անցնում է ամէն բան:

-Սփիւռքի նախարարութիւնն ի՞նչ դերակատարում, մասնակցութիւն է ունեցել ձեր վերադարձի հարցում:

-Մենք աւելի վաղ ենք եկել Հայաստան. Առաջին անգամ՝ 1993-ին, յետոյ՝ 2005-ին: Այսինքն՝ Սփիւռքի նախարարութիւնը դեռ չէր կազմաւորուել: Մենք լաւ բարեկամներ ենք Սփիւռքի նախարարութեան հետ. Նրանք ընդունում են մեր առաջարկները, քննարկում են, ընթացք տալիս: Սփիւռքի նախարարութիւնը մեզ չի անտեսում, չի մոռանում: Տիկին Հրանոյշ Յակոբեանը շատ լաւ ծրագրեր է ձեռնարկում, որոնք շատ հայերի կ'օգնեն հայրենադարձուել, իրենց բախտը, ճակատագիրը մեկընդմիջտ կապել Հայրենիքի հետ:

-Քաջալերու՞մ էք, որ ուրիշները եւս հայրենադարձուեն, հաստատուեն Հայաստանում:

-Ի հարկէ, դա իմ ամենօրեայ խօսակցութեան թեման է: Ամէն պահ ես կարող եմ տեղափոխուել ուրիշ երկիր, դրսում աշխատել, սակայն ինձ համար կարեւորը այստեղ աշխատելն է ու այստեղ ապրելը: Նունը մշտապէս ասում եմ դրսում բնակուող իմ ընկերներին, ծանօթներին, բարեկամներին: